2. Беляев Л.С. Оптимальное управление электроэнергетическими системами, содержащими ГЭС, с применением вероятностных методов: Автореферат дис. ... докт. техн. наук. – Новосибирск: Издательство Академии наук СССР, Сибирское отделение, 1968.
3. Использование водной энергии /Под редакцией Щавелева Д.С. – Ленинград: Энергия, 1976. – 655с.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԷՆԵՐԳԱՅԱՄԱԿԱՐԳԻ ԱԵԿ-Ի ԿԹԱՐԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԸ ԵՎ  
ՆՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ**

*Է. Սարգսյան, Լ. Գալստյան*

Հողվածում հետազոտությունները նվիրված են համակարգի ծանրագույն ռե-  
ժիմներից մեկին՝ ասինքրոն ռեժիմին (ԱՌ)։ ԱՌ-ը դիտարկենք Հայաստանի էներ-  
գետիկական համակարգի օրինակի վրա։ Տվյալ ռեժիմը համարվում է էներգահա-  
մակարգի աշխատանքի առավել վթարային ռեժիմներից մեկը, որը կապված է  
էլեկտրակայանների գեներատորների զուգահեռ աշխատանքի կայունության  
խախտման հետ։ Այն իր հերթին կարող է բերել էներգահամակարգի էլեմենտների  
վնասվածության, սպառիչների էլեկտրամատակարարման խախտման և տնտե-  
սական մեծ վնասների։ Դրա համար շատ կարևոր է էներգահամակարգում ԱՌ-ի  
ժամանակին հայտնաբերումը, նրա արագ, սելեկտիվ ու հուսալի վերացումը և  
նորմալ աշխատանքի վերականգնումը։

Գեներատորի կամ համակարգի մի մասի (գեներատորների խումբ) մոտ ասին-  
քրոն ռեժիմի առաջացման պատճառները կարող են լինել չափազանց բազ-  
մազան։ Այն կարող է առաջանալ հզոր գեներատորի գրգռման կորուստի,  
դինամիկ կամ ստատիկ կայունության խախտման, ոչ սինքրոն ավտոմատ կրկ-  
նակի միացման (ԱԿԱ), համակարգային տարանցիկ էլեկտրահաղորդման գծերի,  
ըստ ստատիկ կայունության պայմանի թուլատրելիից ավելի գերբեռնելու  
հետևանքով, կարճ միացումների դեպքում պաշտպանության կամ հրաժա-  
րումների արդյունքով։

Այսպիսով, էներգահամակարգերում գոյություն ունեցող ավտոմատ սարքվածք-  
ները պետք է կարողանան բացահայտել էներգահամակարգի առանձին մասե-  
րում առաջացող ասինքրոն ընթացքները ու կիրառելու միջոցառումներ՝ (օրի-  
նակ՝ ԲԱՅԱ) ուղղված դրանց վերացմանը և վերականգնելու համակարգի սինք-  
րոն աշխատանքը։ Միայն այդ միջոցառումների անէֆեկտիվության դեպքում է, որ  
հնարավոր է առաջանա մի քանի հաճախություն և, որի պայմաններում էլ, թույ-  
լատրվում է տրոհել էներգահամակարգը առանձին մասերի։ Այն իրականացվում  
է ասինքրոն ռեժիմի ավտոմատ վերացման (ԱՌՎ) սարքի միջոցով։

Վթարային ռեժիմներում դինամիկ կայունության հետ կապված խախտումները  
կանխելու համար անհրաժեշտ է էլեկտրահաղորդման թողունակության կարճա-  
տև (երկարատև) բարձրացում։

Դիտարկենք հետևյալ դեպքը, երբ երկու գեներատորներ ունենում են հնարա-  
վոր խոտորումներ կապված երկու տարբեր էԶԳ-երի հետ։ Այս պարագայում  
ռեժիմը կպահանջի ՅԵԿ-ի կողմից արտադրվող հզորության իջեցում։

$\Delta P_p$  - բեռնաթափման հզորությունը հաշվարկվում է որպես նախափթարային  
ռեժիմի և հետփթարային ռեժիմներում նվազագույն հզորության պահուստ, որն  
ապահովում է ստատիկ կայունությունը  $k_{u,hq} = 1.08$ ։ Հաշվի առնելով հաղորդվող  
հզորության չկարգավորվող տատանումները  $\Delta P_{\Sigma} \approx 0.1 P_{q,0}$ ։

$$\Delta P_p = P_{q,0} + \Delta P_{\Sigma} - P_{p,hq} = 1.1 P_{q,0} - \frac{P_{u,hq} - 0.1 P_{u,hq}}{k_{u,hq}} = 1.1 P_{q,0} - \frac{0.9 P_{u,hq}}{1.08} \quad (1)$$

որտեղ՝  $P_{u,hq}$  -ն հետփթարային ռեժիմում հաղորդվող հզորության սահմանային  
արժեքն է։ Այն որոշվում է կորերից։

Առավելագույն բեռնաթափում է պահանջվում այն դեպքում, երբ նորմալ  
ռեժիմում առավելագույնի է հասնում թուլատրելի հաշվարկվող հզորությունը։

$P_{u,0}$  - ստատիկ կայունության սահմանն ապահովող նվազագույն հզորությանն է,  
 $k_{u,0} = 1.2$  - սահմանային նվազագույն գործակիցն է։

$$\Delta P_{p,0} = P_{u,0} - P_{p,hq} = \frac{P_{u,0} - \Delta P_{\Sigma}}{k_{u,0}} - \frac{P_{u,hq} - 0.1 P_{u,hq}}{k_{u,0}} \quad (2)$$

Ուժեղ ներգործության գրգռման ավտոմոտ կարգավորիչներով սինքրոն գեներ-  
ատորների համար  $U_q = \text{const}$ , իսկ ներքին դիմադրությունը ունի զրոյական ար-  
ժեք ( $X_q = 0$ )։

$$P_{u,0} = \frac{U_q E_h}{X_{th,0}} \quad P_{u,hq} = \frac{U_q U_h}{X_{th,hq}} \quad (3)$$

որտեղ  $X_{th,0}$  և  $X_{th,hq}$  - էլ. հաղորդման շղթայի նախափթարային և հետփթարային  
ռեժիմներում լրիվ դիմադրությունն է։ Հետփթարային ռեժիմում  $X_{q,hq} > X_{q,0}$  և

$$X_{th,hq} = X_{th,0} + X_{q,hq} - X_{q,0} - \Delta X_h \quad (4)$$

$X_{h,0}$  - նորմալ ռեժիմում ընդլայնական փոխհատուցման դիմադրությունն է։

Հայկական էներգահամակարգում ասինքրոն ընթացքի առաջացման առավել  
հավանական հանգույցներն ու ՕԳ-ն են Եղեգնաձոր ԵԿ-ի էլեկտրական հանգույցը  
(Շամբ, Վայք և Վարդենիս, Գետալի 220 կՎ ՕԳ) և Մեղրի 220 կՎ միջիամակարգային  
ՕԳ-ը։ Համակարգի մնացած 220 կՎ ՕԳ-ը կարելի է համարել ուժեղ էլեկտրական  
կապեր, որոնց վրա ասինքրոն ընթացքի առաջացումը քիչ հավանական է։

Նախապես ունենալով որոշակի ելակետային տվյալներ ինչպես ԱՌՎ-ի, այնպես  
էլ ԲԱՅԱ-ի հաշվարկը կատարվում է հստակ համակարգային ծրագրով, որը  
հնարավորություն է տալիս իրականացնել ԲԱՅԱ-ի տեղի և դրվածքի ընտրությունը։

Իրանի էներգահամակարգից հզորություն ստանալիս Հայկական էներգահամա-  
կարգում որոշ վթարների դեպքում, ինչպես օրինակ, ՀԱԵԿ-ի ռեակտորային բլոկի կամ  
մի գեներատորի, Հ. ԶԵԿ-ի բլոկի և այլ խախտումներ, հնարավոր է բերի Մեղրի  
միջիամակարգային գծի ճոճքին և նրա անջատմանը Իրանական համակարգից  
(Սևար ԵԿ-ից), քանի որ այդ գծի վրա իրանական կողմը տեղադրել է հզորության  
սահմանափակման ավտոմատիկա 250 ՄՎտ,  $t = 15$  վրկ. որվածքներով։

Այդ միջիամակարգային կապի անջատման հետևանքով Հայկական էներգա-  
համակարգը կմեկուսացվի մեծ դեֆիցիտով, որն էլ իր հերթին կբերի հա-  
ճախության խորը իջեցման, սպառիչների զանգվածային անջատման՝ ՀԱԲ-ի  
գործողությունից և այլ անցանկալի հետևանքների։

Նման վթարային ռեժիմներում միջիամակարգային կապը պահպանելու համար  
անհրաժեշտ է Հայկական էներգահամակարգում նախատեսել հակավթարային  
ավտոմատիկա, որը ի վիճակի է արագ կերպով անջատել մեծ հզորություն։

Ռեժիմների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Մեղրի գծի անջատումը  
կանխելու համար, ԲԱՅԱ-ից անջատվող հզորության մեծությունը պետք է ընտրել  
էլեկտրիկ Իրանից Հայաստան եկող հնարավոր ամենամեծ հոսքից։ Չմեղվա առա-  
վելագույն ռեժիմում Իրանից Հայաստան հոսքը ընդունված է 120 ՄՎտ, ձմեղվա  
նվազագույն ռեժիմում՝ 100 ՄՎտ։ Ամառվա առավելագույն և նվազագույն  
ռեժիմներում արտահոսք Հայաստանից Իրան մոտ 50-100 ՄՎտ։

**Դիտենք ԱԵԿ-ի ռեակտորային բլոկի անջատումը։** Չմեղվա առավելագույն և  
նվազագույն ռեժիմներում ԱԵԿ-ի ռեակտորային բլոկի անջատումը 380 ՄՎտ  
հզորությամբ բերում է ասինքրոն ընթացքի Մեղրի գծով։

Կատարված հաշվարկների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ վթարի  
դեպքում Մեղրի գծի անջատումը ( $P_{\text{որ}} = 250$  ՄՎտ,  $t_{\text{որ}} = 15$  վրկ) կանխելու համար

անհրաժեշտ է ԲԱՅԱ-ից անջատել մոտ 220 ՄՎտ առավելագույն ռեժիմում և մոտ 160 ՄՎտ նվազագույն ռեժիմում, հաշվի առնելով, որ Տաթև ՅԷԿ-ում կգործի բեռի արագ հավաքման ավտոմատիկան, հավաքելով համապատասխանաբար 50 ՄՎտ և 90 ՄՎտ հզորություն:

Նշված հզորությունները հավաքելու համար նախատեսվում է ԲԱՅԱ, որը կանջատի ԱԷԿ-ի 110 կՎ ռադիալ գծերը (ՕԳ Անուշ, ՕԳ Ատոմային 1,2, ՕԳ Էջմիածին) մոտ 60 ՄՎտ զուևարային բեռով առավելագույն ռեժիմում և մոտ 30 ՄՎտ նվազագույն ռեժիմում: Այդ ԲԱՅԱ-ն կգործի ԱԷԿ-ի ռեակտորի առաջին տեսակի վթարային պաշտպանությունից եկող ազդանշանի փաստից  $t=0$  դրվածքով:

Նշենք, որ տվյալ վթարի դեպքում կգործի նաև Շինուհայր ենթակայանում տեղադրված ԲԱՅԱ-ն, անջատելով մոտ 65 ՄՎտ առավելագույն ռեժիմում և մոտ 50 ՄՎտ նվազագույն ռեժիմում:

**Եզրակացություն:** Գամակարգի տրոհումը առանձին սինքրոն աշխատող մասերի ԱՌԱՎ-ի միջոցով պետք է իրականացվի այն դեպքում, երբ մնացած բոլոր միջոցառումների կիրառումը չի բերու համակարգի նորմալ սինքրոն աշխատանքի պահպանմանը: Վթարային ռեժիմներում համակարգի սինքրոն աշխատանքն ապահովելու համար լայն կիրառում է գտել բեռի անջատման հատուկ ավտոմատիկայի (ԲԱՅԱ) ներդրումը էներգահամակարգում:

#### Գրականություն

1. Веников В.А. Переходные электромеханические процессы в электрических системах. - М.: Высшая школа, 1978.
2. Саркисян Э.А. Анализ кратковременных асинхронных режимов при потере возбуждения турбогенераторов. - М.: Энергетика и транспорт, 1990. - Т. 36, № 4. - С. 40-45.
3. Инструкция по предотвращению и ликвидации аварий в электрической части энергосистемы. - Ереван: Армглавэнерго, 1984.

### ПОСТРОЕНИЕ СИСТЕМЫ НЕЛИНЕЙНЫХ АЛГЕБРАИЧЕСКИХ УРАВНЕНИЙ Z-Y МАТЕМАТИЧЕСКОЙ МОДЕЛИ УСТАНОВИВШЕГОСЯ РЕЖИМА ЭЛЕКТРОЭНЕРГЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ ПРИ СМЕШАННОМ ТИПЕ СТАЦИОННЫХ УЗЛОВ

М. Тамразян

В настоящее время для решения задачи расчета установившегося режима электроэнергетической системы (ЭЭС) успешно применяются уравнения типа Y-Z, которые функционируют как при P-U, так и при P-Q типах станционных узлов [1-3].

В данной работе предлагается построить соответствующие системы нелинейных алгебраических уравнений установившегося режима ЭЭС на основании Z-Y математической модели, когда электрические станции одновременно могут быть как типа P-Q, так и типа P-U.

Для дальнейшего изложения материала принимается нижеприведенная система индексов [3].

Исходная Z-Y математическая модель имеет следующий вид;

$$\begin{bmatrix} \dot{U}_{m0} \\ \dot{U}_{k0} \\ \dot{I}_j \end{bmatrix} = \begin{bmatrix} Z_{m,n} & Z_{m,\ell} & C_{m,i} \\ Z_{k,n} & Z_{k,\ell} & C_{k,i} \\ D_{i,n} & D_{i,\ell} & Y_{ij} \end{bmatrix} \times \begin{bmatrix} \dot{I}_n \\ \dot{I}_\ell \\ \dot{U}_{i0} \end{bmatrix} \quad (1)$$

Нетрудно заметить, что элементы подматрицы  $C_{m,i}$ ,  $C_{k,i}$  и  $D_{i,n}$ ,  $D_{i,\ell}$  являются безразмерными величинами. Матричное уравнение (1) в алгебраической форме имеет вид

$$\dot{U}_{m0} = \sum_{n=1}^{\Gamma} Z_{m,n} \dot{I}_n + \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma+\Gamma^*} Z_{m,\ell} \dot{I}_\ell + \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} C_{m,i} \dot{U}_{i0}, \quad (2)$$

$$\dot{U}_{k0} = \sum_{n=1}^{\Gamma} Z_{k,n} \dot{I}_n + \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma+\Gamma^*} Z_{k,\ell} \dot{I}_\ell + \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} C_{k,i} \dot{U}_{i0}, \quad (3)$$

$$\dot{I}_j = \sum_{n=1}^{\Gamma} D_{i,n} \dot{I}_n + \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma+\Gamma^*} D_{i,\ell} \dot{I}_\ell + \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} Y_{ij} \dot{U}_{i0}. \quad (4)$$

Учитывая, что

$$\dot{U}_{m0} = \dot{U}_m - \dot{U}_0, \quad \dot{U}_{k0} = \dot{U}_k - \dot{U}_0, \quad \dot{U}_{i0} = \dot{U}_i - \dot{U}_0, \quad (5)$$

вышеприведенные уравнения (2), (3) и (4) переписываются в виде

$$\dot{U}_m = \dot{U}_{\text{Бм}} + \sum_{n=1}^{\Gamma} Z_{m,n} \dot{I}_n + \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma+\Gamma^*} Z_{m,\ell} \dot{I}_\ell + \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} C_{m,i} \dot{U}_i, \quad (6)$$

$$\dot{U}_k = \dot{U}_{\text{Бк}} + \sum_{n=1}^{\Gamma} Z_{k,n} \dot{I}_n + \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma+\Gamma^*} Z_{k,\ell} \dot{I}_\ell + \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} C_{k,i} \dot{U}_i, \quad (7)$$

$$\dot{I}_j = \dot{I}_{\text{Бj}} + \sum_{n=1}^{\Gamma} D_{i,n} \dot{I}_n + \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma+\Gamma^*} D_{i,\ell} \dot{I}_\ell + \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} Y_{ij} \dot{U}_i, \quad (8)$$

где

$$\dot{U}_{\text{Бм}} = \left( 1 - \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} C_{m,i} \dot{U}_i \right), \quad (9)$$

$$\dot{U}_{\text{Бк}} = \left( 1 - \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} C_{k,i} \dot{U}_i \right), \quad (10)$$

$$\dot{I}_{\text{Бj}} = - \sum_{i=\Gamma+1}^{\text{H}} Y_{ij} \dot{U}_i. \quad (11)$$

Следует отметить, что на основании Z-Y гибридной матрицы пассивной части электрической сети (при смешанном типе станционных узлов) можно получить системы нелинейных алгебраических уравнений для расчета установившегося режима электроэнергетической системы.

Умножая уравнения (6) и (7) соответственно на  $\hat{I}_m$  и  $\hat{I}_k$ , а уравнение (8) на  $\hat{U}_j$ , получим

$$\begin{aligned}\hat{S}_m &= \dot{U}_m \hat{I}_m = P_m + jQ_m, \\ \hat{S}_k &= \dot{U}_k \hat{I}_k = P_k + jQ_k, \\ \hat{S}_j &= \dot{I}_j \hat{U}_j = P_j - jQ_j.\end{aligned}\quad (12)$$

Переходя к комплексным узловым мощностям, матричное уравнение (1) примет следующий вид:

$$\begin{bmatrix} \hat{S}_m \\ \hat{S}_k \\ \hat{S}_j \end{bmatrix} = \begin{bmatrix} \hat{S}_{Em} \\ \hat{S}_{Ek} \\ \hat{S}_{Ej} \end{bmatrix} + \begin{bmatrix} \sum_{n=1}^{\Gamma} Y_{m,n} \dot{U}_n \dot{U}_m & \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma} Y_{m,\ell} \dot{U}_\ell \dot{U}_m & 0 \\ \sum_{n=1}^{\Gamma} Y_{k,n} \dot{U}_n \dot{U}_k & \sum_{\ell=\Gamma+1}^{\Gamma} Y_{k,\ell} \dot{U}_\ell \dot{U}_k & 0 \\ 0 & 0 & \sum_{j=\Gamma+1}^H Z_{i,j} \dot{I}_j \hat{I}_i \end{bmatrix} \quad (13)$$

где

$$\hat{S}_m = -(Y_{m,n} + Y_{m,\ell}) \dot{U}_0 \hat{U}_m, \quad (14)$$

$$\hat{S}_k = -(Y_{k,n} + Y_{k,\ell}) \dot{U}_0 \hat{U}_k, \quad (15)$$

$$\hat{S}_j = (1 - (B_{i,n} + B_{i,\ell})) \dot{U}_0 \hat{I}_i. \quad (16)$$

После установления аналитических выражений соответствующих систем нелинейных алгебраических уравнений установившегося режима электроэнергетической системы можно перейти к их решению. Нетрудно заметить, что в результате были получены две системы уравнений для Z(Y) блока, когда электрические станции одновременно могут быть как типа P-Q, так и типа P-U:

$$\begin{cases} \Phi_{pm}(U_n, \Psi_{Un}; \Psi_{U\ell}) = 0, \\ \Phi_{qm}(U_n, \Psi_{Un}; \Psi_{U\ell}) = 0, \\ \Phi_{pk}(U_n, \Psi_{Un}; \Psi_{U\ell}) = 0, \end{cases} \quad (17)$$

а также для Y(Z) блока, когда нагрузочные узлы могут быть типа P-Q:

$$\begin{cases} \Phi_{pi}(I'_j, I''_j) = 0, \\ \Phi_{qi}(I'_j, I''_j) = 0. \end{cases} \quad (18)$$

Учитывая полученные выражения систем нелинейных алгебраических уравнений установившегося режима электроэнергетической системы при смешанном типе станционных узлов, можно прийти к следующему выводу, что их решение возможно любым методом.

### Литература

1. Хачатрян В. С., Бадалян Н. П., Тамразян М. Г., Гулян А. Г. Решение систем гибридных нелинейных алгебраических уравнений установившегося режима ЭЭС при смешанном типе станционных узлов // Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН.-2001.- Т 55, N 2.-С. 210-217.
2. Хачатрян В.С., Бадалян Н.П., Хачатрян К.В., Маркрян К.К. Расчет установившегося режима ЭЭС, когда станционные узлы типа P-U превращаются в нагрузочные узлы типа P-Q // Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН.- 2001.- Т 54, N3.- С. 41-46.
3. Тамразян М.Г. Построение Z-Y математической модели установившегося режима ЭЭС при смешанном типе станционных узлов // Вестник МАНЭБ.-2005.-Том 10,N5.- С. 44-46.

### ԷԼԵԿՏՐԱԳՆՈՐՂԱՆ ԳԾԵՐԻ ՆՈՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՍՈՂԵԼԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ 4. Առաքելյան

Էլեկտրահաղորդման գծերը էլեկտրաէներգետիկական համակարգի ամենակարևոր կառուցվածքային էլեմենտներից է: Համակարգի մյուս էլեմենտների համեմատությամբ՝ գծերատորներ, տրանսֆորմատորներ, այն բնութագրվում է մի էական առանձնահատկությամբ: Այդ առանձնահատկությունը նրանում է, որ էլեկտրահաղորդման գծերը ներկայացվում է ալիքային պարամետրերով:

Չետազոտության նպատակն է հաշվի առնել էներգետիկական համակարգի զարգացման աստիճանը և համակարգչային տեխնոլոգիաների լայն հմտարվությունները:

1. Վերագնահատել բաշխիչ և սնման էլեկտրական ցանցերի հաշվարկման մեթոդները:

2. Վերագնահատել էլեկտրաէներգետիկական համակարգերի ռեժիմների մոդելավորումը:

3. Սողելավորել միջպետական էլեկտրահաղորդման ռեժիմը:

Առաջարկվող մոդելի առավելություններն են.

- էլեկտրահաղորդման գծի նոր մոդելի կառուցումը:
- էլեկտրահաղորդման գծի առաջնային և երկրորդային պարամետրերի առանձնացումը:
- էլեկտրահաղորդման գծի թողարկման ընդունակության գնահատումը:
- Օրագրային հեշտ իրացումը:

Էլեկտրական ցանցերի հաշվարկներում լայնորեն տարածված է էլեկտրահաղորդման գծի  $\Pi$  - մոդելը [1]:

$$\underline{U}_1 = \left( 1 + \frac{Z_q * Y_q}{2} \right) * \underline{U}_2 + \sqrt{3} * Z_q * \underline{I}_2 \quad (1)$$

$$\underline{I}_1 = \left( \frac{Y_q}{4} + \frac{Z_q * Y_q^2}{4} \right) * \frac{\underline{U}_2}{\sqrt{3}} + \left( 1 + \frac{Z_q * Y_q}{2} \right) * \underline{I}_2 \quad (2)$$

Կատարենք հետևյալ նշանակումները.

$$K_{\Pi} = 1 + \frac{Z_q * Y_q}{2} \quad (3)$$

$$K_{\Pi}^Z = \sqrt{3} * Z_q \quad (4)$$

$$K_{\Pi}^Y = \frac{1}{\sqrt{3}} * \left( Y_q + \frac{Z_q * Y_q^2}{4} \right) \quad (5)$$

Հաշվի առնելով (3) – (5) նշանակումները, (1) և (2) բանաձևերը կընդունեն հետևյալ տեսքերը.

$$U_1 = K_{\Pi} * U_2 + K_{\Pi}^Z * I_2 \quad (6)$$

$$I_1 = K_{\Pi}^Y * U_2 + K_{\Pi} * I_2 \quad (7)$$

Ինչպես հայտնի է, էլեկտրահաղորդման գծի մերկայացվում է նաև քառաբևեռակ-մոդելով [1].

$$U_1 = ch\gamma_0 * l * U_2 + \sqrt{3} * W_{\Pi} * sh\gamma_0 * l * I_2 \quad (8)$$

$$I_1 = \frac{sh\gamma_0 * l}{\sqrt{3} * W_{\Pi}} * U_2 + ch\gamma_0 * l * I_2 \quad (9)$$

(8) և (9) արտահայտությունները մերկայացնենք հետևյալ տեսքով [2].

$$U_1 = K_A * U_2 + \sqrt{3} * W_{\Pi} * K_B * I_2 \quad (10)$$

$$I_1 = \frac{K_C}{\sqrt{3} * W_{\Pi}} * U_2 + K_D * I_2 \quad (11)$$

որտեղ  $K_A, K_B, K_C, K_D$  -ն կոմպլեքս գործակիցներ են:

Կատարենք հետևյալ նշանակումները.

$$K_M = K_A = K_D \quad (12)$$

$$K_B = K_C \quad (13)$$

$$K_M^Z = \sqrt{3} * W_{\Pi} * K_B \quad (14)$$

$$K_M^Y = \frac{K_B}{\sqrt{3} * W_{\Pi}} \quad (15)$$

Հաշվի առնելով (12) - (15) նշանակումները, (10) և (11) հավասարումները ընդունում են հետևյալ տեսքերը.

$$U_1 = K_M * U_2 + K_M^Z * I_2 \quad (16)$$

$$I_1 = K_M^Y * U_2 + K_M * I_2 \quad (17)$$

(16) և (17) արտահայտությունները մերկայացնում են գծի նոր "M" մոդելի հավասարումները: Սողելի գործակիցների արտահայտություններն են.

$$K_{Ma} = ch\alpha_0 * l * \cos\beta_0 * l \quad (18)$$

$$K_{Mr} = sh\alpha_0 * l * \sin\beta_0 * l \quad (19)$$

$$K_{Ma}^Z = -\sqrt{3} * B_a \quad (20)$$

$$K_{Mr}^Z = -\sqrt{3} * B_r \quad (21)$$

$$K_{Ma}^Y = \frac{B_a}{\sqrt{3} * W_{\Pi}^2} \quad (22)$$

$$K_{Mr}^Y = \frac{B_r}{\sqrt{3} * W_{\Pi}^2} \quad (23)$$

Էլեկտրահաղորդման գծի ալիքային պարամետրերն որոշվում են [3]-ում ներկայացված մեթոդներով:

Հետազոտություններն իրականացվել են Հայաստան-Իրան (Ահար) 220ԿՎ լարման էլեկտրահաղորդման գծի նկատմամբ և արդյունքները ներկայացվում են հետևյալ աղյուսակներով.

Աղյուսակ 1

Էլեկտրահաղորդման գծի "Կ"- մոդելի պարամետրեր					
Սողել \ Գործակից	$K_{\Pi a}$	$K_{\Pi r}$	$K_{\Pi a}^Z$ [ՕՄ]	$K_{\Pi r}^Z$ [ՕՄ]	$K_{\Pi r}^Y$ $10^{-4}$ [ՍՄ]
"Կ"	0.9941	0.0009	11.2491	72.2053	1.6173

Աղյուսակ 2

Էլեկտրահաղորդման գծի "M"- մոդելի պարամետրեր					
Սողել \ Գործակից	$K_{Ma}$	$K_{Mr}$	$K_{Ma}^Z$ [ՕՄ]	$K_{Mr}^Z$ [ՕՄ]	$K_{Mr}^Y$ $10^{-4}$ [ՍՄ]
"M"	0.9941	0.0009	11.2063	72.1001	1.6197

Եզրակացություն.

1. Կառուցված էլեկտրահաղորդման գծի նոր "Ց"-մոդելը համարժեք է գծի "Կ" մոդելին:

2. Էլեկտրահաղորդման գծի նոր մոդելը հնարավորություն է ընձեռում մոդելավորել էլեկտրական ցանցի ցանկացած ռեժիմ:

3. Էլեկտրահաղորդման գծի նոր մոդելը հնարավորություն է տալիս գնահատել ցանցերի թողարկման ընդունակությունը և լուծել էներգախնայողության խնդիրներ:

4. Կազմված համակարգչային C++ ծրագիրը ապահովում է կիրառության լայն սահմաններ և հաշվարկների բարձր ճշտություն:

Գրականություն

1. ԹավրՍՏԶ Թ. Ը., ՀոՋՏՏԶ Շ. Կ. ԺնՖվՌԿ ֆսպՍՑՐՏտարԿՊՈՒփԻՐ տարԿԿԿվվՏՀՏ Ռ տՏրՑՏՎվՏՀՏ ՑՏՍՈ. -Շ.: նվարչՏՈՑՏՎՈՂՈՑ, 1985. -272ր.
2. Առաքելյան Վ., Խանձրաձյան Ս. Միջպետական էլեկտրահաղորդման գծերի հզորությունների կորուստների հաշվարկման նոր մեթոդների մաթեմատիկական մոդել.-Երևան: ՀՊՃՀ, Տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածու: -2004. -Էջ. 191-193:
3. Առաքելյան Վ. Պ. Էլեկտրական ցանցեր /գործնական աշխատանքներ / - Երևան. ՀՊՃՀ, 1999. -22 էջ:

ԱՐԴՅՈՒՆԱՐԱՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ, ՆԵՐԱՌՅԱԼ ԱՍԻՆԵՐՈՆ ՌԵԺԻՍՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԲԱՐԴ ԷՆԵՐԳԱՅԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ

Է. Սարգսյան, Ս Հովհաննիսյան

Ասինքրոն ռեժիմների հաշվարկի համար անհրաժեշտ մեթոդները կիրառելու նպատակով, նախ, պետք է կատարել էներգահամակարգի գործոնների վերլուծություն, որոնք ազդում են ամբողջ երկարատև անցողիկ պրոցեսի վրա:

- Այդ գործոնների թվում են՝
1. Սինքրոն գեներատորի ստատորի և ռոտորի կոնտուրներում հոսող էլեկտրամագնիսական պրոցեսները, որոնք կապված են հոսքակցունների փոփոխության հետ;
  2. Սինքրոն գեներատորի սեփական, փոխադարձ և սինքրոն մոմենտների փոփոխությունը;
  3. Էլեկտրական կայաններում արագությամբ;
  4. ան կարգավորման, գրգռման և տեխնոլոգիական պրոցեսների հաշվարկը;
  5. Բեռերի համազույցներում անցողիկ պրոցեսների դիտարկումը;
  6. Համակարգում հաճախականության փոփոխությունը;
  7. Համակարգի ավտոմատիկայի աշխատանքը և այլն:

Վերը նշված գործոններից յուրաքանչյուրը կարող է էական ազդեցություն բողմել ոչ միայն ամբողջ երկարատև անցողիկ պրոցեսի վրա, այլ նաև նրա առանձին էտապների (փուլերի) վրա:

Տարբերում են հետևյալ ռեժիմները՝

1. Սինքրոնացված կայունացված;
2. Սինքրոն անցողիկ;
3. Ոչ սինքրոն անցողիկ (ասինքրոն);
4. Ասինքրոն կայունացված;
5. Հետվթարային կայունացված ռեժիմներ:

Երկարատև էլեկտրամագնիսական անցողիկ պրոցեսի դիտարկման ժամանակ կարող են տեղ գտնել ինչպես բոլոր ռեժիմները, այնպես էլ այդ ռեժիմների մի մասը: Այսպես օրինակ, կախված վթարի ժամրությունից, հնարավոր է սինքրոն անցողիկ ռեժիմը ավարտվել հետվթարային կայունացված ռեժիմով:

Էներգահամակարգի կայունացված ռեժիմը բնութագրվում է պարամետրերի շատ դանդաղ և անկանոն փոքր փոփոխություններով:

Հանկարծակի մեծ գրգռումների (գայրացումների) դեպքում սկսվում են մեծ տատանումներ, իսկ վթարի խորացման կամ երկարատևության դեպքում, կարող է տեղ գտնել էներգահամակարգի կայունության խախտումը: Սինքրոն անցողիկ պրոցեսը բնութագրվում է համակարգի մեկ հաճախականության աշխատանքով (մեկ աստիճանով): Էներգահամակարգում պրոցեսի բնույթը, այդ դեպքում, տատանողական է:

Հետագայում, կախված վթարի տեսակից, նրա խորությունից, տևողությունից և զարգացումից, առաջացած տատանումները, ինչպես նաև ռեզոնանսային երևույթները, կարող են հարուցել ասինքրոն ռեժիմներ (ԱՌ): Երկարատև կամ մեծ տատանումները, իրենց հերթին, կարող են բերել սինքրոնիզմի խախտմանը, ավտոմատիկայի և ռելեական պաշտպանության սարքերի կեղծ (սխալ) աշխատանքին, կասկադային վթարների զարգացմանը:

Էլեկտրամեխանիկական անցողիկ պրոցեսների բնույթը բարդ սխեմայում էականորեն տարբերվում է հասարակ սխեմաների պրոցեսներից: Բարդ սխեմայում,

գլխավորապես, վթարի խորացումը, երբ մի գծով ԱՌ է, ապա ինչ որ պատճառով այն կարող է բերել կայունության խախտմանը մեկ ուրիշ սինքրոն աշխատող տեղամասում, այսինքն՝ բերել լրացուցիչ կայունության խախտմանը:

Համակարգում լրացուցիչ կայունության խախտման հետ է կապված նրանում մի քանի ոչ սինքրոն հաճախականությունների առաջացումը: Բնութագրող դեպք է եռահաճախային համակարգը: Գործնականում, հազվադեպ դեպքերում, երեք ոչ սինքրոն հաճախականությունների առաջացումներից հետո, առանց սպասարկող անձնակազմի միջամտության, համակարգի բոլոր երեք մասերի նորից սինքրոնիզացումը, այսինքն, ռեսինքրոնիզացիան կատարվում է ավտոմատ կերպով:

Համակարգի մի մասի փոխազդեցության պատճառով՝ մյուս մասի վրա, ռեսինքրոնիզացիայի պայմանը երեք և ավելի ոչ սինքրոն հաճախականությունների դեպքում բավականին վատ է, քան երկու հաճախականությունների դեպքում: Եռահաճախականային համակարգի հաջող ռեսինքրոնիզացիայի պայմանի ամենալավ եղանակը (մեթոդը) համարվում է ոչ սինքրոն աշխատող մասերից մեկի անջատումը ամբողջ համակարգից: Այդ դեպքում համակարգի մնացած երկու ոչ սինքրոն մասերը կարող են արագ սինքրոնիզացվել:

Կայունացված ԱՌ-ը կարող է առաջանալ համակարգում հատուկ միջոցառումների բացակայության դեպքում: Այդ տեսակի ԱՌ-ի բնութագրող պայման է համակարգերի մասերի միջև միջին սահքի հաստատուն լինելը: Հետվթարային կայունացված սինքրոն ռեժիմը բնութագրվում է նրանով, որ համակարգը աշխատում է որոշ վատացված բնութագրերով՝ համեմատած նորմալ ռեժիմի հետ:

Ամբողջ ԱՌ-ի պրոցեսի վրա մեծ ազդեցություն է թողնում նաև գեներատորի և առաջնային շարժիչների (տուրբինների) կարգավորման համակարգի աշխատանքը: Այդ համակարգի խմբերին են դասվում առաջնային և երկրորդային կարգավորիչները:

Հաճախականության փոփոխման ավտոմատ սարքը (ՀՓԱՍ (АРЧВ-автоматическое регулирование частоты вращения)), որը ունի առաջնային շարժիչը (տուրբինան), էական ազդեցություն է թողնում ոչ միայն ԱՌ-ի տևողության, այլ նաև սինքրոնիզմի մեջ գտնվելու պրոցեսի վրա: Այդպիսի սարքի առկայության դեպքում (АРЧВ) սինքրոնիզացիան կարող է կատարվել այն պահին, երբ ԱՌ-ի դեպքում սահքի միջին առժեքը փոքր է դառնում սահքի թույլատրելի արժեքից, որը համարվում է նորից սինքրոնիզացիայի կամ ռեսինքրոնիզացիայի համար բավարար պայման:

Եզրակացություն: Ասինքրոն ռեժիմում յուրաքանչյուր համակարգ բնութագրվում է երկհաճախականային սխեմայով: Եռահաճախականային կամ ավելի՝ բազմահաճախականային համակարգերի դեպքում հարկավոր է էներգահամակարգը տրոհել մասերի, կոմպենսացնելով իրենց բալանսը գեներացիայով և բեռով և հետո, թողնելով մեկ զույգ երկհաճախականային մաս, ավտոմատիկայի միջոցով սինքրոնիզացնել ենթահամակարգը: Այսպես շարունակելով հասնել ամբողջ համակարգի սինքրոնիզացմանը:

Գրականություն

1. Веников В. А. Переходные электромеханические процессы в электрических системах. – М.: Высшая школа, 1978.-414с.
2. Портной М. Г., Рабинович Р. С. Управление энергосистемами для обеспечения устойчивости. – М.: Энергия, 1978.-352 с.
3. Веников В. А., Погосян Т. А., Саркисян Э. А. Способ анализа результирующей устойчивости и методы его расчета. – Минск //Энергетика, 1985.№9. -С. 3-8.

**ԱՄԻՆՔՐՈՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԾՇՉՐԻՏ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՍՈՂԵԼՈՎ**  
**Ս. Յովհաննիսյան**

Մաթեմատիկական մոդելավորման դեպքում ասինքրոն ռեժիմները (ԱՌ) պետք է ներկայացվեն սինքրոն գեներատորի ռոտորի և ստատորի հոսանքների փոփոխություններով, իսկ վերջիններս կախված են վթարի խորությունից և տևողությունից: Մաթեմատիկական մոդելները կարող են տարբեր լինել, կախված գեներատորային հանգույցից և վթարի տեղի հեռավորությունից: Օրինակ, գեներատորը կարող է ներկայացվել հաստատուն էլշուով, ներքին դիմադրությունից հետո, այսինքն, եթե այն էլեկտրական տեսանկյունից բավականին հեռացված են վթարի տեղից: Իսկ երբ գեներատորը մոտ է վթարի տեղին, կամ վթարը կատարվել է գեներատորի սեղմակներին, ապա պետք է փոխվի մաթեմատիկական մոդելը և ավելի մանրամասն դիտարկվի էլեկտրամագնիսական անցողիկ պրոցեսները ոչ միայն ռոտորի կոնտուրներում, այլ նաև դեմֆերային (հանդարտիչ) կոնտուրներում:

Յուրաքանչյուր գեներատորի ռոտորի շարժման հավասարումը բնութագրվում է հետևյալ ոչ գծային դիֆերենցիալ հավասարումներով.

$$T_j \frac{d^2 \delta}{dt^2} = \frac{\omega_0 (P_{in} - P_{up} - P_{wup})}{1 - s/\omega_0},$$

որտեղ  $T_j$ -ն՝ գեներատորների մշտական իներցիան [ՍՎտ\*վ],  $\delta$ -ն՝ գեներատորի ռոտորի պտտման անկյունը հաշվարկային կետի նկատմամբ [ռադ],  $s$ -ը՝ գեներատորների սահքը [ռադ/վ] կամ [%],  $P_{in}$ -ն՝ տուրբինի հզորությունը [ՍՎտ]:

Գեներատորի ակտիվ հզորության սինքրոն բաղադրիչները որոշվում են հետևյալ արտահայտությամբ.

$$P_{up_i} = E_i^2 Y_{ii} \sin \alpha_{ii} + \sum_{j=1}^n E_i E_j Y_{ij} \sin(\alpha_{ij} - \varphi_{ij}),$$

որտեղ  $E$ -ն՝ էլշուի գործող արժեքը,  $Y$ -ը՝ սեփական և փոխադարձ հաղորդականություն,  $\alpha$ -ն՝ լարման և էլշուի ֆազի շեղման անկյունը,  $\varphi$ -ն՝ կոմպլեքս դիմադրությունների լրացուցիչ անկյունները:

Հաշվարկների առաջին փուլում յուրաքանչյուր գեներատորի կողմից ծախսվում է ասինքրոն ակնթարթային հզորություն, որը որոշվում է հետևյալ արտահայտությամբ.


$$P_{wup} = \{P_{wup(\theta)}[1 + K \sin(\Theta - \alpha)] + P_{wup(\delta)}[1 + L \sin(\Theta - \beta)] + P_{wup(\gamma)}[1 - M \sin(\Theta - \gamma)]\},$$

$$\text{որտեղ } K = \sqrt{1 + (sT_d')^2}; \quad L = \sqrt{1 + (sT_d'')^2}; \quad M = \sqrt{1 + (sT_q'')^2};$$

$$\alpha = \arctg \frac{1}{sT_d'}; \quad \beta = \arctg \frac{1}{sT_d''}; \quad \gamma = \arctg \frac{1}{sT_q''}; \quad \Theta = 2\delta_0 - 2st.$$

որտեղ  $P_{wup(\theta)}$ -ը,  $P_{wup(\delta)}$ -ը,  $P_{wup(\gamma)}$ -ը՝ միջին ասինքրոն հզորություններ են, որոնք հարուցվում են, համապատասխանաբար, զրգոման փաթույթից և

դեմպֆերային (հանդարտիչ) կոնտուրներից,  $T_d', T_d'', T_q''$ -ները՝ սինքրոն գեներատորի տարբեր կոնտուրների ժամանակի հաստատուններն են: Այ. 1-ում պատկերված կորերը բնութագրում են ասինքրոն ռեժիմի պրոցեսը:



Այսպիսով, հավաքական միջոցառումների ազդեցությունը

երկմեքենայական սխեմային անցնելիս յուրաքանչյուր ենթահամակարգի էվոլյուցիային սահքը որոշվում է.

$$s_{1(2)} \text{ էվլվ} = \frac{\sum_{i=1}^n s_i T_{ji}}{\sum_{i=1}^n T_{ji}},$$

Այդ դեպքում երկու ասինքրոն պտտվող մասերի միջև սահքի գործող արժեքը կլինի.

$$s_{12} = s_{1\text{էվլվ}} - s_{2\text{էվլվ}}, \quad \text{կամ } s_{12} = \omega_1 - \omega_2,$$

որտեղ  $\omega_1$ -ը և  $\omega_2$ -ը՝ համապատասխանաբար, առաջին և երկրորդ համակարգերի անկյունային արագություններն են:

**Եզրակացություն**

1. Բարդ էներգահամակարգերի արդյունարար կայունության (կամ ԱՌ) հետազոտման և համակարգի հաշվարկի համար նպատակահարմար է կիրառել տապային (փուլային) հաշվարկի ալգորիթմը:
2. Արդյունարար կայունության հաշվարկը նպատակահարմար է կատարել թվային ինտեգրման ոչ բացահայտ մեթոդներով կամ բացահայտ ու ոչ բացահայտ կոմբինացված մեթոդների կիրառմամբ՝ ամենևին չկորցնելով հաշվարկի ճշտության աստիճանի մեջ:

**Գրականություն**

1. Веников В. А., Погосян Т. А., Саркисян Э. А. Анализ расчетов электромеханических переходных процессов при потере возбуждения генератора // Изв. АН. СССР. Энергетика и транспорт. -1988. -С. 174-177.
2. Саркисян Э. А. Анализ кратковременных асинхронных режимов при потере возбуждения турбогенераторов // Энергетика и транспорт. -М., 1990. -Т.36, N4. -С. 40-45.
3. Веников В. А Погосян Т. А Саркисян Э. А. Способ анализа результирующей устойчивости и методы его расчета. -Минск //Энергетика, 1985.-N9.-С. 3-8.